ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

1

Ձեր հանդեսի այս տարվա № 3-ում տպագրված «Դիտողություններ Դավիթ բեկի ապստամբության պատմության շուրջը» մեր բանավեճային հոդվածում խոսելով, ի միջի այլոց, Ղափանի ապստամբության ղեկավարների միջև եղած որոշ տարաձայնությունների մասին և, չգտնելով հարմար բնորոշում, սխալմամբ գործածել ենք «կողմնորոշում» բառը։ Այդ անհաջող արտահայտությամբ արված ձևակերպումները կարող են առիթ տալ թյուրըմբռնման։ Ուստի հարկ ենք համարում այստեղ նշել պատմական այն իրողությունը, որ Ղափանում նկատված այդ մասնակի տարակարծությունները չեն ազդել և չէին կարող ազդել Դավիթ բեկի գլխավորած շարժման ընդհանուր ընթացքի և կողմնորոշման (օրիենտացիայի) վրա։

Հայտնի է, որ դեռևս XVII դարի վերջին քառորդում ռուսական կողմնորոշումը պարարտ հող գտավ հայ իրականության մեջ և հետագայում ավելի ամրապնդվեց ու դարձավ համաժողովրդական։ Հայերի ազատագրական շարժումները պատմական անխուսափելիությամբ կապված էին Ռուսաստանի աջակցության հետ։ Եվ կասկածից վեր է, որ ինչպես արցախեցիները ու ամբողջ հայ ժողովուրդը, այնպես էլ Ղափանի ապստամբները ունեցել են ռուսական օրիենտացիա։ Այդ մասին արդեն հրապարակված են ոչ քիչ գիտական ուսումնասիրություններ։

Ա. ՄԱԴՈՅԱՆ

2

«Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի 1973 թ. № 6-ում աղբյուրագետ Պ. Մուրադյանն իր «Դիտողություններ Օձունի արձանագրությունների վերծանության առթիվ» հոդվածում մի շարք անընդունելի դիտողություններ անելուց հետո, որոնք վերաբերում են երիտասարդ ճարտարապետ Գ. Շախկյանի վերծանությանը, ի միջի այլոց խոսում է նաև 1945 թ. մեր հրատարակած Ավանի տաճարի պատերից ընկած և այժմ նորից վերաշարված մեկական բառ պարունակող երկու արձանագրությունների մասին, որոնցից մեկը բովանդակում է Յոհան անունը, իսկ մյուսը մի փակագիր է Ա գրի վրա հյուսած, որ վերծանել ենք Դաւրկ անձնանունը, որ Գեորգ-ի հնում շատ տարածված բարբառային ձևն է և կարդացվել է Գորկ։ Այդպես վերծանելու համար մենք հիմք ենք ունեցել փակագրի մեջ պարզորեն երևացող գ, ա, ւ, ր, կ գրերը։ Ենթադրել ենք, որ Յոհաներ և Դաւրկ Ավանի տաճարի կառուցման ժամանակ Հովհան հակաթոռ կաթողիկոսի գործակիցներից են եղել, գուցե և տաճարը կառուցող վարպետներից երկուսը[1]։ Այդ ենթադրությունն անելու համար հիմք ենք ունեցել վերոհիշյալ արձանագրությունների գրերի հնագույն ձևերը և հին վարպետների սովորությունը իրենց կառուցած տաճարների որևէ տեղում իրենց հիշատակելու։

Պ. Մուրադյանը վերևում նշված իր հոդվածում մերժում է մեր վերծանությունը և երկու տարբեր մարդկանց անունները (Յոհան և Դաւրկ) միացնելով միմյանց, կարդում է Յոհան սարեաւագ. հաշվի չառնելով այդ վերծանությանը խանգարող հանգամանքները։

Յոհան և Դաւրկ (կամ իր ընթերցմամբ սարկաւագ) անունները տարբեր բարերի վրա են գրված, ըստ որում Յոհան անունից հետո բավական ազատ տեղ կա, որտեղ կարող է գրվել Գորկ *կամ* սարկաւագ *փակագիրը։ Աղբյուրագետ Պ. Մուրադյանը լավ պետք է իմանար, որ հր-*

---

1 Կ. Հաֆադարյան, Ավանի երկլեզվյան ծածկագիր արձանագրություն, Երևան, 1945, էջ 15—16։

նում բառերը իրարից անջատ չէին գրում, մանավանդ վիմական արձանագրությունների մեջ։ Նշանակում է, եթե բառերն իրարից անջատ են, նույն արձանագրության մասերը չեն կարող լինել։

Սակայն մի պահ ենթադրենք, որ այդ մի արձանագրությունը բացառություն է և փորագրող վարպետը հաշվի չի նստել սովորությունների հետ և երկու բառանոց այդ փոքրիկ արձանագրության բառերը իրարից անջատ, իրարից հեռու է դրել։ Այս դեպքում էլ Պ. Մուրադյանը սխալ է, որովհետև Յոհան անունը գրված է 11 սմ երկարություն ունեցող գրերով, իսկ Ֆաւրկ-ի գրերի երկարությունը 13,5 սմ է։ Միթե այդքան գեղեցիկ գրեր քանդակող վարպետը մի բառը կարող էր գրել փոքր գրերով, մյուսը՝ ավելի մեծ։

Այդ բոլորից անկախ, հարգելի աղբյուրագետը պետք է լավ իմանար, որ առանց սկզբնական ս գրի սարկաւագ չի կարող լինել։ Բանն այն է, որ Մուրադյանը միևնույն ա գիրը երեք անգամ ա է կարդում և մի անգամ էլ՝ ս։ Փակագրի մեջ ս գիր չկա։ Մուրադյանը ա գրի ելուստը կրճատում է (մի անգամ, որպեսզի սարկաւագ բառն ստանա)։

Եթե մի քիչ առաջ տանենք Պ. Մուրադյանի փակագիր կարդալու եղանակը, այդ սարկաւագին կրեթե ոչ մի ելուստ չավելացնելով կարող ենք ավագության աստիճան տալ և փակագիրը կարդալ աւագ սարկաւագ. միայն այս դեպքում միևնույն ա-ն ոչ թե 3, այլ 5 անգամ պետք է կարդայինք և մի անգամ էլ այդ ա-ն կարդայինք ս։ Եթե վերծանության այս սիստեմը մի քիչ ավելի զարգացնենք և մի փակագրի պատկերի մեջ մեր 36 գրերի ելուստները տեղավորենք ինչպիսին կա Հաղբատավանքի հուշարձաններից մեկի պատին, այդ փակագրի մեջ կարող կլինենք կարդալ Խորենացու պատմությունը սկզբից մինչև վերջ կամ մեր միջնադարյան ողջ գրականությունը, քանի որ այդ ամբողջի մեջ միայն 36 գիր կա։

Անընդունելի է Պ. Մուրադյանի ոչ միայն Ավանի վերոհիշյալ երկու արձանագրությունների կամայական վերծանությունը, այլև նրա հորինած վերծանության եղանակը ընդհանրապես։

Պրոֆ. Կ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆ